**Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հովքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-ֆինանսիստի (ծածկագիր՝ 3.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին**

09.06.2015

Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հովքի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հովքի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Հովքի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնի համար:
1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ծածկագիր՝ 3.1-2):
Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված լիազորություններ՝
ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
գ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.
դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար.
զ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.
ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
Նշված պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
ա) առնվազն միջնակարգ կրթություն,
բ) ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական

ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Փաստաթղթերը ընդունվում են Հովքի գյուղապետարանում և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում, ամեն օր ժամը10-ից մինչև 17-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից: Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում: Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հովքի գյուղապետարանի աշխատակազմ/գ. Հովք,, հեռ. 093372248/ կամ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն:
Մրցույթը կկայանա 2015թ-ի հուլիսի 9-ին, Հովքի գյուղապետարանի շենքում, ժամը 14-ին:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թ-ի հունիսի 22-ը:
Հասցեն Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, Գ. Հովք, Հովքի գյուղապետարան
Հեռ. 093372248
Էլ. փոստ՝ hovq.tavush@mta.gov.am
ՀՀ Տավուշի մարզ գ. Հովք փողոց 1 շենք 21/1 Էլ.փոստ hovq.tavush@mta.gov.am Հեռ. 093372248

**Հասցե՝** ՀՀ Տավուշի մարզ գ. Հովք փողոց 1 շենք 21/1

**Հեռ..՝** +374 93 372248

**Էլ. փոստ՝** hovq.tavush@mta.gov.am

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ